



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

29.06.2020թ.
ք. Երևան

Քաղաքացիական գործ
թիվ ԵԱԴԴ/0150/02/12

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործի
ենթակայությունը որոշելու մասին

1. Գործի դատավարական նախապայմանությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

26.03.2009թ. «ՆՈՐԱՇԵՆ 2007» սպառողական կոպերատիվի (այսուհետ նաև՝ Կոոպերատիվ) (ի դեմս նախագահ՝ Արմեն Թադևոսյանի) և Վյաչեսլավ Ստեփանյանի միջև կնքվել է «Անշարժ գույքի սեփականության իրավունքի նախնական և նախավճարի» պայմանագիր, որի 1.2 կետի համաձայն՝ Կոոպերատիվը պարտավորվել է ավարտել շինարարությունը, գրանցել և շահագործման հանձնել և հիմնական պայմանագրով Վյաչեսլավ Ստեփանյանին ի սեփականություն փոխանցել երրորդ անձանց իրավունքներով չծանրաբեռնված և հետևյալ չափանիշներին համապատասխանող գույք. «գտնվելու վայրը՝ ք. Երևան, Աջափնյակ համայնք, Գ. Չաուշի 14/3 հասցեի հողատարածքի վրա գտնվող գույքային համալիր, 5-րդ հարկ, 89,9 քմ մակերեսով 2 սենյականոց բնակարան»: Այնուհետև 01.04.2009թ. Կոոպերատիվի և Վյաչեսլավ Ստեփանյանի միջև կնքվել է նախավճարի պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Վյաչեսլավ Ստեփանյանը Կոոպերատիվին կանխիկ տվել է 13.485.000 (տասներեք միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ նախավճար՝ որպես Երևան քաղաքի Աջափնյակ համայնքի Գ. Չաուշի 14/3 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի 5-րդ բնակելի հարկում գտնվող 89,9քմ ընդհանուր տարածքի և հողամասի համապատասխան բաժնային մասի առուվաճառքի կատարման ապահովում:

27.10.2009թ. Կոոպերատիվի և Սաթիկ Տոնոյանի միջև կնքվել է «Անշարժ գույքի սեփականության իրավունքի նախնական և նախավճարի» պայմանագիր, որի 1.2 կետի համաձայն՝ Կոոպերատիվը պարտավորվել է ավարտել շինարարությունը, գրանցել և շահագործման հանձնել և հիմնական պայմանագրով Սաթիկ Տոնոյանին ի սեփականություն փոխանցել երրորդ անձանց իրավունքներով չծանրաբեռնված և հետևյալ չափանիշներին համապատասխանող գույք. «գտնվելու վայրը՝ ք. Երևան, Աջափնյակ համայնք, Գ. Չաուշի 14/3 հասցեի հողատարածքի վրա գտնվող գույքային համալիր, 10-րդ հարկ, 89,9 քմ, 3 սենյականոց բնակարան»: Նույն պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ «Տարածքի արժեքը կազմում է հարդարված վիճակում, կատարվում են բոլոր կոմունիկացիաները/մուտքի դուռ, եվրոպատուհաններ, հատակի հարթեցում,

միջնորմեր/ 13.485.000 (տասներեք միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ»: Նույն պայմանագրի 3.2 կետի համաձայն. «Պայմանագրի կնքման պահին նախնական ներդրումը կազմում է Տարածքի արժեքը, վճարված է ամբողջությամբ»:

20.04.2009թ. Կոոպերատիվի և Վյաչեսլավ Ստեփանյանի միջև կնքվել է նախավճարի պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Վյաչեսլավ Ստեփանյանը Կոոպերատիվին կանխիկ տվել է 15.000.000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ նախավճար՝ որպես Երևան քաղաքի Աջափնյակ համայնքի Գ. Չաուշի 14/3 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի առաջին հարկում գտնվող առևտրի սրահից 130,5քմ ընդհանուր տարածքի և հողամասի համապատասխան բաժնային մասի առուվաճառքի կատարման ապահովում:

ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի ղեկավարի 05.12.2011թ. թիվ ԱԲ-7989 տեղեկանքի համաձայն՝ ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 շենքի թիվ 44 բնակարանը (91,1քմ) Կոոպերատիվը 14.05.2010թ. թիվ 2408 առուվաճառքի պայմանագրով օտարել է Արա Գրիգորյանին, որն այն օտարել է Սիմա Ղուկասյանին 01.07.2010թ. թիվ 3393 առուվաճառքի պայմանագրով, որը բնակարանն օտարել է «Նորաշեն» ԲՀԿ-ին 14.10.2011թ. թիվ 3850 նվիրատվության պայմանագրով, որն էլ այն օտարել է ներկայիս սեփականատեր Նարինե Բարսեղյանին 07.11.2011թ. թիվ 3943 նվիրատվության պայմանագրով: Ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 շենքի թիվ 89 բնակարանը (91,1 քմ) Կոոպերատիվը 24.06.2010թ. թիվ 3118 առուվաճառքի պայմանագրով օտարել է Սիմա Ղուկասյանին, որը բնակարանն օտարել է «Նորաշեն» ԲՀԿ-ին 14.10.2011թ. թիվ 3843 նվիրատվության պայմանագրով, որն էլ օտարել է ներկայիս սեփականատեր Նազանի Գրիգորյանին 07.11.2011թ. թիվ 3943 նվիրատվության պայմանագրով:

21.02.2012թ. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է մուտքագրվել հայցվորներ Վյաչեսլավ Ստեփանյանի և Սաթիկ Տոնոյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Կոոպերատիվի, Արա Գրիգորյանի, Սիմա Ղուկասյանի, «Նորաշեն» ԲՀԿ-ի, Նարինե Բարսեղյանի, Նազանի Գրիգորյանի, ՀՀ ֆինանսների նախարարության և «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ի, որով վերջիններս պահանջել են.

«- անվավեր ճանաչել օրենքի պահանջների խախտմամբ ք. Երևան, Գ. Չաուշի փողոց, 14/3 շենքի թիվ 44 հասցեի 91,1 քմ մակերեսով բնակարանի նկատմամբ Կոոպերատիվի և Արա Գրիգորյանի միջև 14.05.2010թ. կնքված առուվաճառքի պայմանագիրը, Արա Գրիգորյանի և Սիմա Ղուկասյանի միջև 01.07.2010թ. կնքված թիվ 3393 առուվաճառքի պայմանագիրը, Սիմա Ղուկասյանի և «Նորաշեն» ԲՀԿ-ի միջև 14.10.2011թ. կնքված պայմանագիրը, «Նորաշեն» ԲՀԿ-ի և ներկայիս սեփականատեր Նարինե Բարսեղյանի միջև 07.11.2011թ. թիվ 3943 նվիրատվության պայմանագիրը և որպես անվավերության հետևանք վավեր ճանաչել ք. Երևան, Գ. Չաուշի 14/3 հասցեում կառուցված բազմաբնակարան շենքի 5-րդ հարկի թիվ 44 բնակարանը ձեռք բերելու նպատակով 27.10.2009թ.-ին Կոոպերատիվի և Սաթիկ Տոնոյանի միջև կնքված անշարժ գույքի նախնական և նախավճարի պայմանագիրը,

- անվավեր ճանաչել օրենքի խախտմամբ ք. Երևան, Գ. Չաուշի փողոց, 14/3 շենքի թիվ 89 հասցեի 91,1 քմ մակերեսով բնակարանի նկատմամբ Կոոպերատիվի և Սիմա Ղուկասյանի միջև 24.06.2010թ. կնքված թիվ 3118 առուվաճառքի պայմանագիրը, Սիմա Ղուկասյանի և «Նորաշեն» ԲՀԿ-ի միջև 14.10.2011թ. կնքված պայմանագիրը, «Նորաշեն» ԲՀԿ-ի և ներկայիս սեփականատեր Նազանի Գրիգորյանի միջև 07.11.2011թ. թիվ 3943 նվիրատվության պայմանագիրը և որպես անվավերության հետևանք վավեր ճանաչել ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 հասցեում կառուցված բազմաբնակարան

շենքի 10-րդ հարկի թիվ 89 բնակարանը ձեռք բերելու նպատակով 26.03.2009թ. Կոոպերատիվի և Վյաչեսլավ Ստեփանյանի միջև կնքված անշարժ գույքի նախնական և նախավճարի և դրանից հետո 01.04.2009թ. կնքված և նոտարական վավերացում ստացած նախավճարի պայմանագիրը,

- մասնակի անվավեր ճանաչել օրենքի պահանջների խախտմամբ 08.12.2009թ. ՀՀ ֆինանսների նախարարության և Կոոպերատիվի միջև կնքված անշարժ գույքի գրավի /հիփոթեքի մասին/ թիվ 2 պայմանագիրը, համաձայն որի՝ «Պրոմթեյ Բանկ» ՍՊԸ-ից 500.000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար վարկ ստանալու նպատակով գրավադրվել է ք. Երևան, Գ. Չաուշի 14/3 բազմաբնակարան շենքի 809,3 քմ տարածքը և 0,1256 հա մակերեսով հողամասը և որպես հետևանք՝ վավեր ճանաչել ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 հասցեի առաջին հարկում գտնվող առևտրի սրահից 130,5 քմ տարածք ձեռք բերելու նպատակով 20.04.2009թ. Կոոպերատիվի և հայցվոր Վյաչեսլավ Ստեփանյանի կողմից կնքված և նոտարական վավերացում ստացած նախավճարի պայմանագիրը»:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա. Սմբատյան) 23.02.2012թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 13.11.2012թ. որոշմամբ թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է մինչև նույն դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԴԴ/0137/01/11 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը:

16.04.2014թ. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Սմբատյանի՝ այլ դատարան տեղափոխվելու հիմքով թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործը վերամակագրվել է նույն դատարանի դատավոր Ա. Մխիթարյանին:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա. Մխիթարյան) 29.06.2015թ. որոշմամբ թիվ ԵԱԴԴ/0150/02/12 կասեցված վարույթով քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

15.06.2018թ. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Մխիթարյանի՝ այլ դատարան տեղափոխվելու հիմքով թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործը վերամակագրվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Կուբանյանին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա. Կուբանյան) 30.08.2018թ. որոշմամբ գործն ընդունվել է վարույթ:

26.12.2018թ. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Կուբանյանի՝ այլ դատարան տեղափոխվելու հիմքով թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործը վերամակագրվել է նույն դատարանի դատավոր Ա. Պետրոսյանին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 14.01.2019թ. որոշմամբ գործն ընդունվել է վարույթ:

Այնուհետև, Դատարանը 14.05.2020թ. որոշում է կայացրել թիվ ԵԱԴԴ/0150/02/12

քաղաքացիական գործը ՀՀ սնանկության դատարանի քննությանը փոխանցելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019 թվականի ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված՝ սույն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանող գործերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցվում են դատարան (Հայաստանի Հանրապետության սնանկության դատարան): Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 28.03.2014 թվականի վճռով Կոոպերատիվը ճանաչվել է սնանկ: (...): Դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով հայցի առարկան կազմող պահանջները, հայցի առարկայի օբյեկտը, քաղաքացիական գործին մասնակցող անձանց շրջանակը, սնանկ ճանաչված պարտապանի՝ սույն քաղաքացիական գործով գործին մասնակցող անձ հանդիսանալը բավարար է արձանագրելու այն իրողությունը, որ գործով կայացվելիք վերջնական դատական ակտը հանգեցնելու է պարտապանի գույքի և գույքային իրավունքների ու պարտականությունների ծավալի փոփոխության, իր մեջ բովանդակում է պարտապանի մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրի առնչությամբ ծագած վեճ, որպիսի պայմաններում քաղաքացիական գործն իր հատկանիշներով դասվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի փոփոխված խմբագրությամբ 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործերի շարքին, և սույն քաղաքացիական գործով վեճը կարող է ազդել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, որպիսի հարցը լուծելու բացառիկ իրավասությունը տրված է մասնագիտացված դատարանին՝ ի դեմս սնանկության գործը քննող դատավորի»:

25.05.2020թ. թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործը մակագրվել է Սնանկության դատարանի դատավոր Լ. Կատվալյանին:

09.06.2020թ. որոշմամբ Սնանկության դատարանը գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

« (...) Օրենսդիրն ամրագրել է որոշակի վեճերով ծագած քաղաքացիական գործերի շրջանակ, որոնք ենթակա են քննության սնանկության վարույթի շրջանակներում՝ սնանկ ճանաչված պարտապանի սնանկության գործը վարող դատավորի կողմից: Մասնավորապես, այդպիսիք են՝

1. սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ ծագած վեճերով քաղաքացիական գործերը,

2. երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ ծագած վեճերով քաղաքացիական գործերը,

3. պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճերով քաղաքացիական գործերը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ, Երևան քաղաքի Գ. Չաուշի 14/3 շենքի թիվ 44 հասցեի անշարժ գույքը ներառված չէ թիվ ԵԱԴԴ/0037/04/13 սնանկության գործով սնանկ ճանաչված պարտապան Կոոպերատիվի գույքի կազմում /հիմք՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի տեղեկատվական կենտրոն ստորաբաժանման ղեկավարի 28.04.2014 թվականի թիվ ԿԽ-1/1520/ գրություն/, այսինքն՝ սույն քաղաքացիաիրավական

վեճը սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ ծագած վեճ չէ, հետևաբար վերոգրյալ վեճը չի ներառվում վերոթվարկյալ առաջին խումբ վեճերով ծագած քաղաքացիական գործերի շրջանակի մեջ, ավելին հայցվորներ Վյաչեսլավ Ստեփանյանը և Սաթիկ Տոնոյանը չեն հանդիսանում նաև թիվ ԵԱԴԴ/0037/04/13 սնանկության գործով պահանջատերեր, ուստի սույն քաղաքացիական գործը չի դասվում նաև պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված պայմանագրերի առնչությամբ ծագած վեճերի շրջանակին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիաիրավական վեճը չի առնչվում սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքին և իրավունքներին, սույն քաղաքացիական գործը չի դասվում նաև վերոթվարկյալ երկրորդ՝ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ ծագած վեճերի, երրորդ խումբ վեճերով ծագած քաղաքացիական գործերի շրջանակին, ուստի թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործը վարույթ ընդունելու իրավական հնարավորությունը բացակայում է»:

Թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 22.06.2020թ.:

2. Կիրառելի իրավական նորմերը, պարզառաքանությունները և եզրահանգումը.

Սույն գործով առաջին աստիճանի դատարանների միջև քաղաքացիական գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու համար գտնում եմ, որ անհրաժեշտ է անդրադառնալ և եզրահանգումներ անել հետևյալ իրավական հարցադրումների կապակցությամբ.

1) արդյո՞ք 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության շրջանակներում հարուցված և քննվող քաղաքացիական գործերը կարող են ըստ ենթակայության հանձնվել Սնանկության դատարանին,

2) արդյո՞ք Սնանկության դատարանը մինչև Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը իրավասու է հանձնված գործի ենթակայության վերաբերյալ անհամաձայնության հիմքով գործն ուղարկել Վճռաբեկ դատարանի նախագահին այն դեպքում, երբ տվյալ գործը հարուցվել է և քննվում է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության շրջանակներում,

3) ինչպես մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով, այնպես էլ՝ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված են արդյո՞ք այնպիսի հանգամանքներ, որոնց բացակայությունը՝ գործի քննությամբ պարզելուց հետո միայն առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները կարող են վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին հարց քննարկել,

4) կարող են արդյո՞ք «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) կարգավորումները կիրառվել մինչ այդ օրենքի ուժի մեջ մտնելը Սնանկության դատարանի վարույթում գտնվող սնանկության

գործի հետագա վարման կամ առանձին դատավարական գործողությունների կատարման գործընթացում,

5) որոշք էին մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված այն պահանջները, որոնց վերաբերյալ քաղաքացիական գործում փաստերի առկայությունը կարող էր միայն թույլ տալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին կատարել իրավաչափ եզրահանգում,

6) որոշք են 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված այն պահանջները, որոնց վերաբերյալ քաղաքացիական գործում փաստերի առկայությունը կարող է միայն թույլ տալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին կատարել իրավաչափ եզրահանգում:

Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ.

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Նախկին օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում (այսուհետ՝ դատարաններ) քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն նույն օրենսգրքին:

Նախկին օրենսգրքի՝ «Առարկայական ընդդատությունն ընդհանուր իրավասության դատարանին» վերտառությամբ 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախկին օրենսգրքի՝ «Տարածքային ընդդատությունը» վերտառությամբ 12-րդ գլխի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը՝ ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետազայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝

1) եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ.

2) (...)

3) գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպքերում:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ Նախկին օրենսգրքի գործողության ժամանակահատվածում ՀՀ դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Ընդ որում, այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը

պետք է համապատասխանեին Նախկին օրենսգրքին: Միակ բացառությունն այս կանոնից նախատեսված է սնանկության վարույթը կարգավորող օրենքների համար:

Նախկին օրենսգիրքը, կարգավորելով քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա գործերի շրջանակը, քաղաքացիաիրավական բնույթի բոլոր վեճերի ընդդատությունը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Ընդ որում, Նախկին օրենսգիրքը, գործածելով «առարկայական ընդդատություն» և «տարածքային ընդդատություն» եզրույթները, սահմանափակվել է առարկայական ընդդատության վերաբերյալ միայն նույն օրենսգրքի 15-րդ հոդվածի կարգավորմամբ: Նշվածով հանդերձ՝ Նախկին օրենսգրքում առանձին գլխով առավել հանգամանալից կարգավորված են տարածքային ընդդատության կանոնները: Մասնավորապես, օրենսդիրը ոչ միայն սահմանել էր այդ կանոններից յուրաքանչյուրին առաջադրվող պայմանները, այլև նախատեսել էր որոշակի հետևանքներ այդ կանոնների խախտմամբ հայցադիմումը վարույթ ընդունելու պարագայում՝ նման իրավիճակում Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով իմպերատիվ կերպով պարտավորեցնելով դատարանին գործը հանձնել այլ դատարանի քննությանը, եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ: Միաժամանակ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում օրենսդիրը սահմանել էր, որ **դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝ գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպքերում** առանց բացահայտելու նման դեպքերի հնարավոր շրջանակը կամ սահմանելու այդպիսի լիազորության կիրառման համար անհրաժեշտ՝ ուղղորդող պայման (պայմաններ), ինչպես դա առկա է նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում:

Վերոգրյալն ուղղակիորեն փաստում է նշված իրավակարգավորման անորոշությունը և իրավակիրառման գործընթացում խնդրահարույց բնույթը: Նշված նկատառումով, ելնելով քննարկվող իրավակարգավորման մեջ պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից՝ հարկ է նշել, որ օրենսդիրն այս դեպքում, որպես միակ ուղղորդող չափանիշ, սահմանել է **գործը հարուցված դատարանում քննելու անհնարինությունը**: Այս կապակցությամբ կարևորվում է հետևյալ հարցադրման պարզաբանումը. արդյո՞ք այդ անհնարինությունը բացառապես պետք է պայմանավորված լինի տարածքային ընդդատության որևէ կանոնի կիրառելիությամբ, թե նման անհնարինություն կարող է ծագել նաև առարկայական ընդդատության կանոնի կիրառման կամ դրա փոփոխության արդյունքում:

Համակարգային մեկնաբանության ենթարկելով Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի և նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իրավադրույթները՝ պետք է նշել, որ օրենսդիրը հստակ կարգավորել է տարածքային ընդդատության կանոնի խախտմամբ վարույթ ընդունված և գործի քննության ընթացքում տարածքային ընդդատության փոփոխության դեպքերը՝ առաջին դեպքում նախատեսելով գործը հանձնելու դատարանի իմպերատիվ լիազորություն, իսկ երկրորդ դեպքում պարտավորեցնելով շարունակել գործի քննությունն այն հարուցված դատարանում: Հետևաբար կարելի է փաստել, որ Նախկին օրենսգիրքը սպառնիչ կերպով կարգավորել է տարածքային ընդդատության կանոններով պայմանավորված գործերի հանձնման կամ հետագա քննության հարցը և նույն օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված իրավիճակը որևէ կերպ չի կարող ենթադրել տարածքային ընդդատության կանոնի խախտման կամ փոփոխության հիմքով գործը հանձնելու իրավական հնարավորությունը: Ինչպես արդեն իսկ նշվեց, թեև օրենսդիրը չի բացահայտել Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հնարավոր

իրավիճակները, սակայն դատական պրակտիկայում այդպիսին կարող են դիտարկվել այն դեպքերը, երբ գործը տվյալ դատարանում քննելու անհնարինությունը պայմանավորված է տվյալ դատարանի՝ գործը քննելու իրավասություն ունեցող բոլոր դատավորների կողմից ինքնաբացարկ հայտնելու փաստով կամ վերադաս դատարանի կողմից դատական ակտի բեկանման դեպքում տվյալ դատարանի բոլոր դատավորների՝ գործի քննությանը մասնակցություն ունենալու հանգամանքով: Ընդ որում, վկայակոչված երկու դեպքում էլ օբյեկտիվորեն առկա է գործը տվյալ դատարանում քննելու անհնարինություն, այդ անհնարինությունը որևէ կերպ պայմանավորված չէ ընդդատության կանոնի խախտմամբ կամ փոփոխությամբ: Ընդհակառակը, նման անհնարինությամբ պայմանավորված՝ գործն այլ դատարան ուղարկելու արդյունքում տեղի է ունենում տարածքային ընդդատության այնպիսի փոփոխություն, որը փաստորեն չի համապատասխանում տվյալ գործի տարածքային ընդդատության վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված ընդհանուր կամ հատուկ կանոնին: Վերոգրյալից հետևում է, որ Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի վկայակոչմամբ գործն այլ դատարան ուղարկելու հիմքը որևէ աղերս չէր կարող (չի կարող) ունենալ տարածքային ընդդատության կանոնների հետ՝ անկախ այն հանգամանքից, որ օրենսդրական շարադրանքի պայմաններում տեղ է գտել Նախկին օրենսգրքի «Տարածքային ընդդատությունը» վերտառությամբ գլխում: Նման պայմաններում քննարկելով այն հարցը, թե արդյոք այն կարող է վերաբերել առարկայական ընդդատության կանոնին՝ պետք է արձանագրել հետևյալը.

Նախկին օրենսգիրքը նախատեսում էր, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական դատավարության կարգը սահմանվում է նաև այլ օրենքներով: Որպես այլ՝ այդպիսի օրենք՝ կիրառման ենթակա է(եր) «Սնանկության մասին» օրենքը, ընդ որում՝ նշված օրենքում պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը կարող էին չհամապատասխանել Նախկին օրենսգրքի դրույթներին:

«Սնանկության մասին» օրենքում 17.06.2016թ. ընդունված և 23.07.2016թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-105-Ն օրենքով կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում «Սնանկության գործերի առարկայական ընդդատությունը» վերտառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «Սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»: Ընդ որում, նշված փոփոխությունը և լրացումը նախատեսող օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներում, որպես այդպիսի փոփոխության անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկ, նշված է. «Գործնականում հաճախ է հանդիպում, երբ պարտապանին վերաբերող վեճերը քննվում են տարբեր դատարաններում, օրինակ, երբ պարտապանը վիճարկում է գործարքների անվավերությունը, գույքային պահանջներ է ներկայացնում և այլն: Նման դեպքերում սնանկության գործը մնում է առկախված: Պարտապանին վերաբերող բոլոր քաղաքացիական գործերը մեկ վարույթում քննելը կարող է այն ավելի արդյունավետ դարձնել»¹: Շարադրվածից հետևում է, որ օրենսդրական այս փոփոխության նախաձեռնման և իրականացման նպատակը պարտապանին վերաբերող քաղաքացիական գործերը մեկ վարույթում կենտրոնացնելն է, որը պետք է ապահովի արդարադատության արդյունավետությունը: Փաստորեն, քննարկվող կարգավորմամբ

¹ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8199&Reading=0>

սահմանվել է առարկայական ընդդատության՝ Նախկին օրենսգրքի կարգավորումը լրացնող նոր կարգավորում, որը նախատեսում է, որ որոշակի քաղաքացիական գործեր ենթակա են քննության սնանկության գործի շրջանակում: Ընդ որում, եթե նոր հարուցվելիք գործերի պարագայում արդեն իսկ կանխորոշված էր դրանց առարկայական ընդդատությունը, ապա արդեն իսկ հարուցված գործերի պարագայում նոր կանոնի կիրառելիությունը պարզաբանման անհրաժեշտություն ունի: Մասնավորապես, վերջին դեպքում ստացվում է, որ դատարանի վարույթում առկա է Նախկին օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանող քաղաքացիական գործ, որը միաժամանակ համապատասխանում է «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-105-Ն օրենքով սահմանված՝ առարկայական ընդդատության չափանիշներին: Այլ կերպ ասած՝ առաջանում է տվյալ գործը սնանկության վարույթից դուրս քննելու օբյեկտիվ անհնարինություն, որն էլ կարող է որակվել որպես Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ **«գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպք»:** Հետևաբար կարելի է արձանագրել, որ Նախկին օրենսգրքի գործողության շրջանակներում հարուցված և քննվող այն քաղաքացիական գործերը, որոնք «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-105-Ն օրենքի ուժով ենթակա են քննության սնանկության վարույթում, Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հիմքով կարող են հանձնվել սնանկության գործը քննող դատարանին, տվյալ պարագայում՝ Սնանկության դատարանին:

Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ.

09.02.2018թ. ընդունված և 09.04.2018թ. ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Գործող օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգիրքը սահմանում է **Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան)**, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանում (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) քաղաքացիական գործերով դատավարության իրականացման կարգը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են **Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան)** սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Գործող օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

Գործող օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի՝ մինչև 21.11.2019թ. խմբագրությամբ գործող 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև **վարչական դատարանի կողմից** վերահասցեագրված գործի նկատմամբ:

Նույն հոդվածի՝ 21.11.2019թ. խմբագրությամբ գործող 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև **վարչական կամ սնանկության դատարանի** կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:

Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ **առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերը առաջին ատյանի դատարանում** քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով:

Ի տարբերություն Նախկին օրենսգրքի՝ 09.02.2018 թվականին ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության համակարգ ներդրվեց նաև նոր գործիքակազմ, այն է՝ գործի հարուցման կամ քննության փուլերում տվյալ գործի ընդդատության կամ ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու իրավական ընթացակարգ՝ նման լիազորություն վերապահելով Վճռաբեկ դատարանի նախագահին: Ընդ որում, եթե մինչև 21.11.2019թ. խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը հնարավորություն չէր տալիս լուծելու քաղաքացիական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանների և Սնանկության դատարանի միջև ծագած՝ գործի ենթակայության վերաբերյալ վեճը, ապա 21.11.2019թ. խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը Վճռաբեկ դատարանի նախագահին օժտել է նաև նշված ենթակայության վեճը լուծելու իրավասությամբ՝ համապատասխանաբար գործի ենթակայության վերաբերյալ անհամաձայնություն ունենալու դեպքում նման հարցով գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու լիազորություն վերապահելով նաև գործը ստացած Սնանկության դատարանին:

Նկատի ունենալով, որ Սնանկության դատարանի՝ գործի ենթակայության շուրջ ծագած վեճով Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու և նման վեճը լուծելու Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորության առկայության հարցը կարող է որոշակիորեն խնդրահարույց համարվել Նախկին օրենսգրքի գործողության ժամանակահատվածում հարուցված և քննվող գործերի պարագայում՝ Նախկին օրենսգրքում համապատասխան լիազորությունների և ընթացակարգերի բացակայության հիմքով, հարկ է անդրադառնալ և պարզաբանել հետևյալ հարցադրումը.

արդյո՞ք այն դեպքում, երբ Նախկին օրենսգրքի գործողության ժամանակահատվածում հարուցված և Նախկին օրենսգրքի կանոններով քննվող գործը հանձնվել է Սնանկության դատարանին, և Սնանկության դատարանն անհամաձայնություն ունի գործի ենթակայության վերաբերյալ, Սնանկության դատարանը պե՞տք է ղեկավարվի Նախկին օրենսգրքով, որը ենթակայության վեճի լուծման ընթացակարգ և ըստ այդմ՝ համապատասխան լիազորություններ չի նախատեսում, թե նոր՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի կանոնով, որը սահմանում է, որ գործն ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

Ընդ որում, նշված խնդիրը հարկ է դիտարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 21.11.2019թ. ուժի մեջ մտած լրացման համատեքստում՝

համակարգային վերլուծության ենթարկելով Գործող օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և նույն օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը:

Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծությունից ուղղակիորեն հետևում է, որ Նախկին օրենսգրքի դրույթները կիրառելի են միայն 09.02.2018թ. ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ **առաջին ատյանի դատարանի** վարույթում գտնվող և **առաջին ատյանի դատարանում** քննվող գործերի նկատմամբ, որպիսին Գործող օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասը դիտարկում է միայն **Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին**: Նույն հոդվածի 2-րդ մասում տարբերակված կերպով գործածելով «Սնանկության դատարան» եզրույթը՝ օրենսդիրը որևէ կերպ այն չի ներառել նույն օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորման մեջ, ինչից հետևում է, որ Նախկին օրենսգրքով գործի քննությունն իրականացնելու պայմանը հասցեագրված է **միայն Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին**: Ավելին, Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը գործածում է նաև «վարույթում գտնվող» արտահայտությունը, որպիսի իրավիճակը բացառվում է այն դեպքում, երբ Սնանկության դատարանին Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից գործ է փոխանցվում: Նման իրավիճակում գործը դեռևս չի գտնվում Սնանկության դատարանի վարույթում, հետևաբար Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումն այդպիսի իրավիճակում կիրառելի չէ: Միաժամանակ նկատի ունենալով Գործող օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, որը նախատեսում է, որ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են **Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան)** սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, Սնանկության դատարանը փոխանցված քաղաքացիական գործի ընդունելության հարցը լուծելիս, հիմք ընդունելով Գործող օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի իրավանորմը, իրավասու է ծագած ենթակայության վեճը լուծելու համար գործն ուղարկել Վճռաբեկ դատարանի նախագահին: Վճռաբեկ դատարանի նախագահին էլ վերը շարադրված պատճառաբանությունների հիմքով իրավասու է Գործող օրենսգրքի 26-րդ հոդվածի կիրառմամբ լուծելու իրեն հասցեագրված ենթակայության վեճը:

Դիրքորոշումներ 3-րդ հարցադրման վերաբերյալ.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) Գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ «պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ կարճվում կամ ավարտվում են պարտապանից **գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով** քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով»:

Նույն կարգավորումն առկա է նաև 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում:

15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի համաձայն՝ «(...) դատարանը պարտապանին սնանկ ճանաչելու, դիմումը մերժելու կամ դիմումն առանց

քննության թողնելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին անհապաղ տեղեկացնում է՝

(...),

Հայաստանի Հանրապետության վճարել դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար,

(...)»:

Նույն կարգավորումն առկա է նաև մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 182-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի կետի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

(...),

օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

09.04.2018թ. ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Դատարանը կարճում է գործի վարույթը, եթե՝ վեճը ենթակա չէ դատարանում քննության»:

Օրենսգրքի 439-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«Սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգիրքը:

Մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների, դիմումների և բողոքների վարույթ ընդունելու հարցը լուծելիս կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերը:

Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերն առաջին ատյանի դատարանում քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով»:

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում քննվող քաղաքացիական գործերով պատասխանողների սնանկ ճանաչված լինելու վերաբերյալ Վճարել դատարանից ծանուցում ստանալու կամ Օրենսգրքով թույլատրելի ցանկացած այլ աղբյուրից տեղեկատվություն ստանալու դեպքում առաջին հերթին իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերով պետք է քննարկման առարկա դարձնեն գործի վարույթը՝ «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարճելու հիմքի առկայության հարցը: Միաժամանակ հարկ է նշել, որ տվյալ հիմքի առկայության դեպքում քաղաքացիական գործի վարույթը կարճելու իրավական հնարավորություններն առկա են ինչպես 09.04.2018թ. ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետում, այնպես էլ՝ Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում:

«Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի բովանդակության ուսումնասիրությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող այն քաղաքացիական գործի վարույթն է ենթակա կարճման, որով հայցվորի կողմից պատասխանողին ուղղված է **գումարի բռնագանձման պահանջ կամ գույք հանձնելու պահանջ**: Հետևաբար «Սնանկության մասին» օրենքի

վկայակոչված հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու անհրաժեշտություն կարող է ծագել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) քաղաքացիական գործով պարտասխանողը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով սնանկ է ճանաչվել,

բ) քաղաքացիական գործով սնանկ ճանաչված պարտասխանողի դեմ ներկայացված է գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գումարի բռնագանձման պահանջի դեպքում առավել քան հստակ է դատական գործերի շրջանակը, իսկ գույք հանձնելու պահանջի մասով իրավակիրառ պրակտիկայում հնարավոր է առաջանան որոշակի տարրնկալումներ, ինչպես նաև նկատի ունենալով դատական գործերը մեկ դատարանից մեկ այլ դատարան անհարկի հանձնելը, գործերի քննության անհարկի ձգձգումները կանխելու կարևորությունն ու անհրաժեշտությունը, և այդ հանգամանքների հնարավոր ազդեցությունը գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի ապահովման գործընթացի վրա՝ գտնում եմ, որ հարկ է վերլուծել «Սնանկության մասին» օրենքի վերը նշված հոդվածի իմաստով «գույք հանձնել» եզրույթի հասկացությունը:

Պարտապանի գույքի կազմում ներառման ենթակա գույքի շրջանակը հստակ սահմանված է մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ կարգավորումը որոշակի փոփոխությունների է ենթարկվել 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքով: Մասնավորապես՝ մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: Ի ապահովումն պարտապանի՝ սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված իրավունքով պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար ապահովված իրավունքի առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում են ընդգրկվում սույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում»:

15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ կամ այլ գույքային իրավունքներ, ինչպես նաև երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկաները: Ապահովված իրավունքի այն առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող), որի վերաբերյալ դատարանը սույն օրենքի 39.2-րդ հոդվածով սահմանված կարգով ընդունել է ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացում թույլատրելու մասին որոշում, չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում ընդգրկվում են սույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում»:

Հետևաբար, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ թեպետ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում ընդլայնվել է պարտապանի գույքի կազմում ներառման ենթակա գույքի կազմի շրջանակը, այդ թվում՝ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի

առարկաների ներառման ենթակա լինելու առումով, այդուհանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ ինչպես մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի, այնպես էլ՝ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը վերաբերում է պատասխանողին պատկանող գույքին:

Այս մեկնաբանությունն առավել ամրապնդվում է «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով (ներկայումս գործող խմբագրությամբ) սահմանված այն լրացուցիչ պահանջով, որ հարուցված քաղաքացիական գործն իր ազդեցությունը պետք է ունենա սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ վերը նշված իրավակարգավորումների բովանդակային վերլուծությունից հետևում է, որ «գույք հանձնել» եզրույթը վերաբերում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակության մեջ բացահայտված գույքին, այլ ոչ թե պարտապանի մոտ գտնվող ցանկացած գույքին:

Դիրքորոշումներ 4-րդ հարցադրման վերաբերյալ.

«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) թիվ ՀՕ-294-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերը վարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով»:

«Սնանկության մասին» օրենքի՝ սնանկության գործերի քննության կարգը սահմանող 1-ին հոդվածի համաձայն՝

«1. Սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով:

2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Օրենսգրքի գործողության ոլորտը սահմանող 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործի քննության կամ առանձին դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով»:

Վերոգրյալ իրավակարգավորումները վերլուծելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորման լույսի ներքո՝ կարելի է

հստակորեն արձանագրել, որ Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքով մեծածավալ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Սնանկության մասին» օրենքում, և Օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող հոդվածով տրվել են այն անհրաժեշտ իրավական լուծումները, որոնք հնարավորություն են տալիս տարանջատել մինչև Օրենքի ընդունումը հարուցված և Օրենքի ընդունումից հետո հարուցված սնանկության վարույթների նկատմամբ հետագա կիրառելի իրավակարգավորումների շրջանակը: Այսինքն՝ հստակ ընդգծվել է այն սահմանագիծը, թե սնանկության գործերի որ խմբի նկատմամբ է գործում 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները (այդ թվում՝ 4-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով), և սնանկության գործերի որ խմբի նկատմամբ է շարունակում գործել մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները (այդ թվում՝ 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով):

Վերոգրյալ իրավական վերլուծության արդյունքում հստակ է այն, որ մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը հարուցված սնանկության գործերի վարման գործընթացում կիրառելի չէ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի իրավակարգավորումները: Հետևաբար, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները քաղաքացիական գործերը 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Սնանկության դատարան ըստ ենթակայության ուղարկելիս, ի թիվս այլ հանգամանքների, պետք է պարզեն Սնանկության դատարանում վարվող սնանկության գործը հարուցվել է մինչև 15.04.2020 թվականը (օրենքի ուժի մեջ մտնելը), թե հարուցվել է 15.04.2020 թվականից հետո: Սա է այն սահմանագիծը, որ առաջին ատյանի դատարանները պետք է նկատի ունենան կիրառելի իրավունքի նորմերն ընտրելու գործընթացում:

Միաժամանակ հարկ է նշել, որ ի թիվս 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի մյուս կարգավորումների, նույն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 10-րդ մասը կիրառելիս պետք է այն դիտարկել համակարգային, այն է՝ նույն հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման լույսի ներքո և շրջանակներում:

Մինչև 15.04.2020 թվականը հարուցված սնանկության գործերի վարման գործընթացում 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումները կիրառելը, այդ թվում՝ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման իմաստով, ուղղակի կհակասի նույն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորմանը:

Դիրքորոշումներ 5-րդ հարցադրման վերաբերյալ.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերը **մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն**

օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման հիման վրա կարող են ըստ ենթակայության ուղարկել Սնանկության դատարան հետևյալ հանգամանքների հաշվառմամբ և պարզմամբ.

1) պետք է բացառված լինի քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորությունը,

2) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ,

3) սնանկության գործով պարտապանը պետք է հանդիսանա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիական վեճով պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը՝ կարելի է փաստել, որ միայն վերը նշված երեք պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ենթակայության ուղարկված առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն:

Դիրքորոշումներ 6-րդ հարցադրման վերաբերյալ.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը սահմանելիս Օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել սնանկության գործընթացի արդյունավետությունը, այդ թվում՝ ապահովել սնանկության գործի վարման ամբողջականությունը, գործով բացահայտել հնարավոր բոլոր պարտատերերին և նրանց պահանջները, սնանկության վարույթով անցնող ցանկացած գույքի վերաբերյալ հարցի քննարկում կազմակերպել միայն սնանկության վարույթում, ինչը կապահովի սնանկության վարույթի արդյունավետությունը և սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների ամբողջական իրացումը, քաղաքացիական և սնանկության գործերի ողջամիտ ժամկետում քննությունը, բացառելով հանդերձ նույն գույքի կամ իրավունքի վերաբերյալ տարբեր դատարաններում քննվող գործերի, ինչպես նաև դատական ակտերի առկայությունը և այլն:

Օրենսդրի այս կամքն իր ցայտուն արտահայտումն է ստացել տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններում, որպիսի իրավիճակում ուշադրության է արժանի «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից ընդունված 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքը (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.):

Այսպես. 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նոր խմբագրությամբ 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի

առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

Նշված նոր իրավակարգավորման բովանդակության բացահայտման արդյունքում կարելի է արձանագրել, որ օրենսդրի սահմանած նոր իրավակարգավորումն ենթադրում է քաղաքացիական գործերի առավել լայն շրջանակի քննություն սնանկության վարույթի շրջանակում, մասնավորապես՝ այն քաղաքացիական գործերը, որոնք կապված են սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերի հետ (բացառությամբ սնանկության գործերով կառավարչների կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի):

Այդուհանդերձ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենսդիրը սահմանել է նաև 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում Սնանկության դատարանի կողմից քննության ենթակա (այդ թվում՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից ըստ ենթակայության ստացված) գործերի շրջանակը որոշելու համար անհրաժեշտ իրավակարգավորումները, որոնց վերաբերյալ իրավական վերլուծությունները մանրամասնորեն շարադրված են «Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ» հատվածում: Այսինքն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված քաղաքացիական գործերի փաստական հանգամանքների՝ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմանը համապատասխանելն ինքնին բավարար չէ քաղաքացիական գործն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին եզրահանգում կատարելու համար:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերը **15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով** սահմանված իրավակարգավորման հիման վրա կարող են ըստ ենթակայության ուղարկել Սնանկության դատարան հետևյալ հանգամանքների հաշվառմամբ և պարզմամբ.

1) պետք է բացառված լինի քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորությունը,

2) սնանկության գործը պետք է հարուցված լինի «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից ընդունված 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքն ուժի մեջ մտնելու հետո,

3) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման

միջոցների պայմանագրերի առնչությամբ, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի,

4) քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա Սնանկության դատարանում հարուցված և վարվող սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անհրաժեշտ է փաստել, որ միայն վերը նշված չորս պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ենթակայության ուղարկած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն:

Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Դատարանի 14.01.2019թ. որոշմամբ վարույթ է ընդունվել թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործը (հայցադիմումը դատարան է ներկայացվել 21.02.2012 թ.-ին), որի շրջանակներում Վյաչեսլավ Ստեփանյանը և Սաթիկ Տոնոյանը հայցադիմում են ներկայացրել ընդդեմ Կոռպերատիվի, Արա Գրիգորյանի, Սիմա Ղուկասյանի, «Նորաշեն» ԲՀԿ-ի, Նարինե Բարսեղյանի, Նազանի Գրիգորյանի, ՀՀ ֆինանսների նախարարության և «Պրոմթեյ Բանկ» ՍՊԸ-ի՝ պահանջելով.

«- անվավեր ճանաչել օրենքի պահանջների խախտմամբ ք. Երևան, Գ. Չաուշի փողոց, 14/3 շենքի թիվ 44 հասցեի 91,1 քմ մակերեսով բնակարանի նկատմամբ Կոռպերատիվի և Արա Գրիգորյանի միջև 14.05.2010թ. կնքված առուվաճառքի պայմանագիրը, Արա Գրիգորյանի և Սիմա Ղուկասյանի միջև 01.07.2010թ. կնքված թիվ 3393 առուվաճառքի պայմանագիրը, Սիմա Ղուկասյանի և «Նորաշեն» ԲՀԿ-ի միջև 14.10.2011թ. կնքված պայմանագիրը, «Նորաշեն» ԲՀԿ-ի և ներկայիս սեփականատեր Նարինե Բարսեղյանի միջև 07.11.2011թ. թիվ 3943 նվիրատվության պայմանագիրը և որպես անվավերության հետևանք վավեր ճանաչել ք. Երևան, Գ. Չաուշի 14/3 հասցեում կառուցված բազմաբնակարան շենքի 5-րդ հարկի թիվ 44 բնակարանը ձեռք բերելու նպատակով 27.10.2009թ.-ին Կոռպերատիվի և Սաթիկ Տոնոյանի միջև կնքված անշարժ գույքի նախնական և նախավճարի պայմանագիրը,

- անվավեր ճանաչել օրենքի խախտմամբ ք. Երևան, Գ. Չաուշի փողոց, 14/3 շենքի թիվ 89 հասցեի 91,1 քմ մակերեսով բնակարանի նկատմամբ Կոռպերատիվի և Սիմա Ղուկասյանի միջև 24.06.2010թ. կնքված թիվ 3118 առուվաճառքի պայմանագիրը, Սիմա Ղուկասյանի և «Նորաշեն» ԲՀԿ-ի միջև 14.10.2011թ. կնքված պայմանագիրը, «Նորաշեն» ԲՀԿ-ի և ներկայիս սեփականատեր Նազանի Գրիգորյանի միջև 07.11.2011թ. թիվ 3943 նվիրատվության պայմանագիրը և որպես անվավերության հետևանք վավեր ճանաչել ք. Երևան Գ. Չաուշի փողոցի 14/3 հասցեում կառուցված բազմաբնակարան շենքի 10-րդ հարկի թիվ 89 բնակարանը ձեռք բերելու նպատակով 26.03.2009թ. Կոռպերատիվի և Վյաչեսլավ Ստեփանյանի միջև կնքված անշարժ գույքի նախնական և նախավճարի և դրանից հետո 01.04.2009թ. կնքված և նոտարական վավերացում ստացած նախավճարի պայմանագիրը,

- մասնակի անվավեր ճանաչել օրենքի պահանջների խախտմամբ 08.12.2009թ. ՀՀ ֆինանսների նախարարության և Կոռպերատիվի միջև կնքված անշարժ գույքի գրավի /հիփոթեքի մասին/ թիվ 2 պայմանագիրը, համաձայն որի՝ «Պրոմթեյ

Բանկ» ՍՊԸ-ից 500.000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար վարկ ստանալու նպատակով գրավադրվել է ք. Երևան, Գ. Չաուշի 14/3 բազմաբնակարան շենքի 809,3 քմ տարածքը և 0,1256 հա մակերեսով հողամասը և որպես հետևանք՝ վավեր ճանաչել ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 հասցեի առաջին հարկում գտնվող առևտրի սրահից 130,5 քմ տարածք ձեռք բերելու նպատակով 20.04.2009թ. Կոոպերատիվի և հայցվոր Վյաչեսլավ Ստեփանյանի կողմից կնքված և նոտարական վավերացում ստացած նախավճարի պայմանագիրը»:

14.05.2020թ. Դատարանը որոշում է կայացրել գործն ըստ ենթակայության Սնանկության դատարան ուղարկելու մասին: Քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը ենթակա լինելու Դատարանի եզրահանգումը հիմնավորվել է Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասի վկայակոչմամբ և կիրառմամբ, որը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված՝ սույն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանող գործերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցվում են դատարան»:

Մասնավորապես, Դատարանը, արձանագրելով, որ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 28.03.2014թ. վճռով Կոոպերատիվը սնանկ է ճանաչվել, եզրահանգել է, որ սույն քաղաքացիական գործով առկա են 15.04.2020թ. խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերը, ուստի սույն քաղաքացիական գործը պետք է հանձնել Սնանկության դատարանի քննությանը:

Սնանկության դատարանը նույնպես թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործի ենթակայության հարցը քննարկել և իր անհամաձայնությունը հիմնավորել է Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի իրավակարգավորումների լույսի ներքո՝ միաժամանակ արձանագրելով, որ թեև Կոոպերատիվը սնանկ է ճանաչվել, այդուհանդերձ առկա չեն 15.04.2020թ. խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նախապայմանները:

Հարկ է նախ և առաջ արձանագրել, որ համաձայն www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի տվյալների՝ թիվ ԵԱԴԴ/0037/04/13 գործով Կոոպերատիվը Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 28.03.2014թ. վճռով ճանաչվել է սնանկ:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ թիվ ԵԱԴԴ/0150/02/12 գործը հարուցվել է և նշված գործի քննությունը Դատարանում շարունակվել է Նախկին օրենսգրքով սահմանված կարգով, հետևաբար սույն որոշման «**Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ**» կետում արտահայտված իրավական վերլուծությունների հիմքով առկա էր նշված գործը սնանկության հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ նախատեսված պայմանների առկայության պարագայում Սնանկության դատարան փոխանցելու իրավական հնարավորություն: Վերոգրյալով հանդերձ՝ նկատի ունենալով, որ թիվ ԵԱԴԴ/0150/02/12 գործը ստացած Սնանկության դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել գործի ենթակայության վերաբերյալ և այն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին, հարկ է նաև արձանագրել, որ սույն որոշման «**Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ**» կետում արտահայտված իրավական վերլուծությունների հիմքով առկա է նաև Սնանկության դատարանի՝ գործը

Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու և գործի ենթակայության վերաբերյալ վեճը Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից լուծելու իրավական հնարավորությունը:

Նման պայմաններում սույն որոշման **3-6 կետերում** արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով գործի փաստական հանգամանքներին՝ գտնում եմ, որ դատարանների միջև ծագած ենթակայության վեճը լուծելու համար հարկ է պարզել հետևյալ հանգամանքները՝

ա) արդյո՞ք բացառված է թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորությունը,

բ) թիվ ԵԱԴԴ/0150/02/12 գործի ենթակայության հարցը լուծելիս կիրառման ենթակա է մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը, թե 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումը,

գ) կիրառելի իրավակարգավորման շրջանակներում առկա են արդյո՞ք թիվ ԵԱԴԴ/0150/02/12 գործը Սնանկության դատարանին հանձնելու համար անհրաժեշտ նախապայմանները:

Թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործով ներկայացված հայցապահանջների ուսումնասիրությունից հետևում է, որ թեև սնանկ ճանաչված Կոոպերատիվը հանդես է գալիս որպես պատասխանող, սակայն վերջինիցս գումարի բռնագանձման կամ նրան պատկանող գույք հանձնելու պահանջ ներկայացված չէ: Մասնավորապես, թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործով քննության են առնվում անշարժ գույքի առուվաճառքի, նվիրատվության և գրավի պայմանագրերն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ անշարժ գույքի նախնական և նախավճարի պայմանագրերը վավեր ճանաչելու վերաբերյալ պահանջներ, մինչդեռ ինչպես հետևում է «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կարգավորումից, նշված իրավանորմի հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու պարտադիր պայման է այն, որ սնանկ ճանաչված պատասխանողի դեմ ուղղակիորեն ներկայացված լինի գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջ: Հետևաբար բացառվում է «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործի վարույթը կարճելու իրավական հնարավորությունը:

Անդրադառնալով սույն գործի ենթակայության հարցը լուծելիս կիրառման ենթակա օրենսդրության հարցին՝ հարկ է նշել, որ Կոոպերատիվը սնանկ է ճանաչվել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի թիվ ԵԱԴԴ/0037/04/13 գործով **28.03.2014թ.** վճռով, այսինքն՝ մինչև 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (15.04.2020թ.), որպիսի պարագայում սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում կիրառման ենթակա են մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները: Հետևաբար թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործի՝ Սնանկության դատարանին ենթակայության հարցը պետք է պարզել և գնահատել մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի

կարգավորումների լույսի ներքո: Մինչդեռ թե՛ Դատարանը, և թե՛ Սնանկության դատարանը թիվ ԵԱԴԴ/0150/02/12 գործի ենթակայության վերաբերյալ իրենց հիմնավորումները և անհամաձայնությունը շարադրելիս սխալ եզրահանգման են եկել կիրառման ենթակա օրենսդրության վերաբերյալ՝ թիվ ԵԱԴԴ/0150/02/12 գործի ենթակայության հարցը քննարկելով 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման լույսի ներքո այն դեպքում, երբ սույն որոշման իրավական և փաստական հանգամանքների վերլուծություններից հետևում է, որ կիրառման ենթակա է մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը:

Անդրադառնալով թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործով հայցադիմումով ներկայացված պահանջների բնույթին՝ հարկ է արձանագրել, որ սնանկ ճանաչված Կոոպերատիվը սույն գործով հանդես է գալիս որպես պատասխանող: Միաժամանակ սույն գործով ներկայացված են 3 առանձին գույքային միավորների նկատմամբ հիմնական և դրանցից բխող ածանցյալ պահանջներ, որոնք այս կամ այն կերպ կարող են առնչվել վերջինիս գույքային իրավունքներին (մասնավորապես՝ գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտի արդյունքում հնարավոր է տեղի ունենա սնանկ ճանաչված պարտապանի գույքային իրավունքների փոփոխություն՝ հնարավոր գույքային միավորների արտահոսքի կամ ներհոսքի եղանակով):

Սնանկության դատարանն իր անհամաձայնությունը թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործի ենթակայության վերաբերյալ հիմնավորելիս փաստարկել է միայն ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 շենքի թիվ 44 բնակարանի՝ պարտապան Կոոպերատիվի գույքային զանգվածում ներառված չլինելու հանգամանքը, որը հիմնավորվում է նաև գործում առկա՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի ղեկավարի 05.12.2011թ. թիվ ԱԲ-7989 տեղեկանքով: Սնանկության դատարանը, սակայն, անտեսել է, որ սույն գործով վեճի առարկա հանդիսանում են նաև ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 շենքի թիվ 89 հասցեի բնակարանը և ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 հասցեի առաջին հարկում գտնվող առևտրի սրահից 130,5 քմ տարածքը: Մասնավորապես, հայցվորները վիճարկում են ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 շենքի թիվ 89 հասցեի բնակարանի կապակցությամբ կնքված գործարքները և որպես հետևանք՝ ներկայացրել են նշված բնակարանի կապակցությամբ կնքված անշարժ գույքի նախնական և նախավճարի պայմանագիրը վավեր ճանաչելու պահանջ: Թեև Սնանկության դատարանը որևէ դատողություն չի ներկայացրել վերոնշյալ հասցեի գույքի՝ թիվ ԵԱԴԴ/0037/04/13 սնանկության գործով պարտապանի գույքային զանգվածի մեջ ներառված չլինելու կապակցությամբ, այդուհանդերձ, գործում առկա ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի ղեկավարի 05.12.2011թ. թիվ ԱԲ-7989 տեղեկանքով հիմնավորվում է, որ նշված հասցեի նկատմամբ գրանցված է այլ անձի՝ Նազանի Գրիգորյանի սեփականության իրավունքը: Հետևաբար ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 շենքի թիվ 89 հասցեի բնակարանը ևս չէր կարող ներառված լինել թիվ ԵԱԴԴ/0037/04/13 սնանկության գործով պարտապանի գույքային զանգվածի մեջ:

Սույն գործով, սակայն, մասնակիորեն վիճարկվում է նաև 08.12.2009թ. ՀՀ Ֆինանսների նախարարության և Կոոպերատիվի միջև կնքված «Անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) մասին թիվ 2» պայմանագիրը, որի 1.2 կետի համաձայն՝ գրավատուն՝ Կոոպերատիվը, Հիմնական պարտավորության կատարումն ապահովելու նպատակով գրավադրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ

համայնքի Գ. Չաուշի 14/3 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 101 հասցեում գտնվող 809,3 քմ մակերեսով տարածքը և 0,1256 հա մակերեսով հողամասի նկատմամբ 809,3/9816 սեփականատիրոջ բաժեմասը: Նույն պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ գրավի առարկան Կոոպերատիվին՝ գրավատուին, պատկանում է սեփականության իրավունքով՝ համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի կողմից 02.12.2009թ. տրված թիվ 2677960 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի: Սույն գործով հայցվորների կողմից մասնակիորեն վիճարկվում է նաև վերոնշյալ գրավի (հիփոթեքի) պայմանագիրը և որպես նշված պայմանագրի անվավերության հետևանք՝ ներկայացված է նաև ք. Երևան, Գ. Չաուշի փողոցի 14/3 հասցեի առաջին հարկում գտնվող առևտրի սրահից 130,5 քմ տարածք ձեռք բերելու նպատակով 20.04.2009թ. Կոոպերատիվի և հայցվոր Վյաչեսլավ Ստեփանյանի կողմից կնքված նախավճարի պայմանագիրը վավեր ճանաչելու պահանջ: Համաձայն վերոնշյալ գրավի (հիփոթեքի) պայմանագրի՝ նույն գրավի առարկա գույքը Կոոպերատիվին պատկանում է սեփականության իրավունքով: Սնանկության դատարանը, սակայն, չի վկայակոչել որևէ փաստարկ կամ հղում չի կատարել որևէ ապացույցի, որը հաստատում է նշված գույքը թիվ ԵԱԴԴ/0037/04/13 սնանկության գործով պարտապանի գույքային զանգվածի մեջ ներառված չլինելու հանգամանքը: Հետևաբար, նկատի ունենալով, որ թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործում առկա ապացույցով ուղղակիորեն հիմնավորվում է վիճարկվող գրավի (հիփոթեքի) պայմանագրի առարկա գույքի՝ սնանկ ճանաչված Կոոպերատիվին պատկանելիության փաստը, ինչը «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նշված գույքը պարտապանի գույքի կազմում ներառելու հիմք է, միաժամանակ հաշվի առնելով, որ Սնանկության դատարանը, բացառելով վեճի առարկա կոնկրետ հասցեի՝ պարտապանի գույքային զանգվածի մեջ ներառված լինելու հանգամանքը, որևէ բացառություն չի ներկայացրել գրավի առարկա հանդիսացող գույքի մասով, գործում առկա չէ հակառակ փաստը հիմնավորող որևէ ապացույց, ապա պետք է փաստել, որ նշված պայմանագրի վիճարկման և որպես դրա հետևանք՝ գործարքը վավեր ճանաչելու պահանջների մասով թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործով ծագած վեճն առնչվում է թիվ ԵԱԴԴ/0037/04/13 սնանկության գործով պարտապանի գույքային իրավունքներին: Փաստորեն՝ սույն գործով ներկայացված հիմնական հայցապահանջներից մեկը և դրա ածանցյալ պահանջը համապատասխանում են մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գործն ըստ ենթակայության Սնանկության դատարանն ուղարկելու համար անհրաժեշտ պայմաններին: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, որ սույն գործով ներկայացված մյուս երկու հիմնական և ածանցյալ պահանջների պարագայում բացակայում է գործը Սնանկության դատարանին հանձնելու հիմքը, այդուհանդերձ, վերոթվարկյալ պահանջների մեկ միասնական՝ թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործի շրջանակներում քննության հանգամանքը պայմանավորում է նշված գործի՝ ամբողջությամբ Սնանկության դատարանին ենթակայությունը:

Վերոշարադրյալից հետևում է, որ թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործը համապատասխանում է մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գործն ըստ ենթակայության Սնանկության դատարանն ուղարկելու համար անհրաժեշտ պայմաններին, հետևաբար այն ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործը ենթակա է Սնանկության դատարանին:
2. Սույն որոշումը և թիվ ԵԱԴԴ/0150/02/12 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Սնանկության դատարան:
3. Որոշման օրինակն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ